

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռատիպ: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քհն. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Սեպտեմբերի 29, 2008թ.

**Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու
պատվիրակությանը**

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մյուռնոսիների առիթով Մայր Աթոռ ժամանած Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Արևելյան Եկեղեցիների Քահանայապետական Կոնգրեգացիայի պրեֆեկտ Կարդինալ Լեոնարդո Սանդրիի և ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի ու Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի: Հանդիպմանը ներկա էին նաև Չմմառի Կաթոլիկ Հայոց Պատրիարքություն ներկայացուցիչ Տ. Վարդան եպիսկոպոս Աշքարյանը և Մխիթարյան Միաբանություն վանահայր Հայր Եղիա Քիլադայանը:

Հրաժեշտի հանդիպմանը Վեհափառ Հայրապետը կարդինալ Սանդրիի միջոցով ի Քրիստոս իր ողջույններն ու շնորհակալությունը փոխանցեց Հռոմի Բենեդիկտոս ԺԶ Պապին՝ Հայոց Եկեղեցու հանդեպ ցուցաբերած եղբայրական սիրո ու հարգանքի համար:

Իր հերթին Կարդինալ Լեոնարդո Սանդրին ուրախություն հայտնեց Հայ Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա սերտ հարաբերությունների ու համագործակցության առիթով, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց Հայ Կաթողիկե Եկեղեցու նկատմամբ Հայոց Հայրապետի ուշադրության համար:

###